ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. հոկտեմբերի 23-ից 27-ը ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արմեն Արզումանյանի՝ Ճապոնիա կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**

   Արմեն Արզումանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Ճապոնիա, 2022թ. հոկտեմբերի 23-ից 27-ը

4. **Հրավիրող կողմը՝**

«ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» համաշխարհային ցուցահանդեսի կազմակերպիչներ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն «Ապագա հասարակության ստեղծումը մեր կյանքերի համար» խորագրով «ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» համաշխարհային ցուցահանդեսի առաջին պլանավորման հանդիպմանը

6. **Քննարկված թեմաները՝**

2022թ. հոկտեմբերի 25-ից 26-ը Ճապոնիայի Օսակա քաղաքում տեղի ունեցած «ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» համաշխարհային ցուցահանդեսի առաջին պլանավորման հանդիպմանը մասնակցել են ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ա. Արզումանյանը՝ որպես ոլորտը համակարգող պաշտոնյա և ՀՀ էկոնոմիկայի նախարարի մամուլի քարտուղար Լիլիթ Հակոբյանը՝ որպես «ԷՔՍՊՈ

2020-Դուբայ» համաշխարհային ցուցահանդեսում, հայկական տաղավարի տնօրենի կարգավիճակով ներգրավված անձ:

Միջոցառման ժամանակ քննարկվել է ցուցահանդեսի կազմակերպմանն առնչվող հարցերի լայն շրջանակ՝ հաշվի առնելով, որ ցուցահանդեսը դառնալու է մի տարածք, որտեղ ավելի քան 28 միլիոն այցելու ամբողջ աշխարհից ոչ միայն կդիտի ցուցանմուշներ, այլև այն կդառնա վայր, որտեղ կստեղծվի մարդկության ապագա հասարակությունը:

Հանդիպման ընթացքում ներկայացվել են ցուցահանդեսի թեմաները, ենթաթեմաները, անդրադարձ է եղել միջոցառման գլխավոր ծրագրին (Master plan), ընթացիկ նախապատրաստական աշխատանքներին, ինչպես նաև հետագա ծրագրվող քայլերին:

Քննարկվել է մինչև ցուցահանդեսի մեկնարկը առցանց հարթակի գործարկման ընթացակարգին՝ ամբողջ աշխարհի արդի մարտահրավերները և լուծումները համընդհանուր օգտագործելու համար:

Նախանշվել է, որ ցուցահանդեսի շրջանակներում համաշխարհային գիտելիքը, ինչպիսին են առաջադեմ տեխնոլոգիաները, կներկայացվեն և կօգտագործվեն նոր գաղափարներ ստեղծելու և կիսվելու համար, ինչը, ըստ կազմակերպիչների, կօգնի լուծել մարդկության առջև ծառացած գլոբալ խնդիրները:

Կազմակերպիչների կողմից ներկայացվել է տեղեկատվություն տաղավարների կառուցման, ցուցահանդեսի արտադրության և շահագործման վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի շրջանակներում Ա. Արզումանյանը հանդիպում է ունեցել «ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» համաշխարհային ցուցահանդեսի կազմակերպիչների հետ, որի ընթացքում քննարկվել են ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության հետ կապված կազմակերպչական հարցեր:

Քննարկվել է Հայաստանի Հանրապետության՝ ցուցահանդեսին «A» տեսակի տաղավարով մասնակցության հարցը: Նախատեսվում է, որ «A» տեսակի տաղավարը կկառուցվի՝ օգտագործելով գերժամանակակից տեխնոլոգիաները:

Հայկական տաղավարը կհանդիսանա ուրույն հարթակ, որտեղ կներկայացվեն Հայաստանի պատմությունը և մշակույթը: Հարթակը կծառայի նորարարական գաղափարներով և նվաճումներով փոխանակվելու, ինչպես նաև ապագայի գլոբալ խնդիրների նկատմամբ երկրի մոտեցումները ներկայացնելու համար:

Հանդիպման ընթացքում քննարկվել են հայկական տաղավարի շինարարական աշխատանքների կազմակերպմանը և սահուն իրականացմանն առնչվող հարցեր:

Այցի շրջանակում կազմակերպվել են այցելություններ «B» և «C» տեսակի տաղավարներ՝ տեղում իրականացվող աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն է ձեռք բերվել, համաձայն ընդունված ձևաչափի նման մասշտաբի ցուցահանդեսի կազմակերպման նախապատրաստման փուլում մասնակից երկրների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների համար կազմակերպել անհատական հանդիպումներ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

2.11.2022թ.